# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

07.05.2021 17:15

***Հարգելի՛ փաստաբաններ,***

ՀՀ փաստաբանների պալատը ՀՀ փաստաբանական դպրոցի հետ համագործակցությամբ 2021 թվականի մայիսի 11-ից մայիսի 14-ը, ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանական դպրոցի դատական դահլիճում (հասցե՝ Զաքիյան 7-3, 3-րդ հարկ) կազմակերպելու է վերապատրաստման **առկա դասընթացներ հետևյալ թեմաներով (հեռավար եղանակով հնարավոր չէ միանալ այս դասընթացներին)**՝

1. 11.05.2021թ. ժամը 18:30-ին **Ավանդային պայմանագրերի կնքման և կատարման հետ կապված խնդիրներ** (դասախոս՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մարինա Տաշչյան),

2. 12.05.2021թ. ժամը 18:30-ին **Մաքսային հանցագործությունները ՀՀ-ում** (դասախոս՝ ՀՀ ՊԵԿ քննչական վարչության 3-րդ բաժնի պետ, ի.գ.թ. Վազգեն Շահնազարյան),

3. 13.05.2021թ. ժամը 18:30-ին **Ներկայացուցչությունը ժառանգական հարաբերություններում** (դասախոս՝ նոտար Իռեն Սարգսյան),

4. 14.05.2021թ. ժամը 18:30-ին **Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատի ներկայացման և դրա քննության կարգը** (դասախոս՝ փաստաբան, ԵՊՀ դասախոս Արտակ Ասատրյան)։

Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ պատասխան նամակ ուղարկելով ani.gharibyan@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման, Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը։

Յուրաքանչյուր դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ։

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })